**ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

N **ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ**-26/33

ք. Մեծամոր «11» հունվարի 2026թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Է. Հովհաննիսյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ «Աշոտ Անտոնյան»-ը, ի դեմս տնօրեն Ա. Անտոնյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 7,000,000.00 (յոթ միլիոն) ՀՀ դրամ, Կատարողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև հանձնման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ծառայության դիմաց վճարումները կատարվելու են փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ հետևյալ բանաձևով. ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

- ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.
- ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.
- ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.
- Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
- Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Միաժամանակ, Պայմանագրով սահմանված ծառայությունները մատուցվելու են պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2026թ. ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո՝ Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտին, չկատարված գումարի չափով Պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի  կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման

ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Մեծամորի համայնքապետարան | Ա/Ձ «Աշոտ Անտոնյան» |
| ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 | Արմավիրի մարզ ք. Մեծամոր 1 թղմ. 32-48.. |
| gnumnermetsamor@mail.ru | amjhak35@gmail.com |
| ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | «ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900332239467 | Հ/Հ 1930071344170100 |
| ՀՎՀՀ 04440608 | ՀՎՀՀ 49631711 |
| Համայնքի ղեկավար ------------------ Է. Հովհաննիսյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Տնօրեն ------------------ Ա. Անտոնյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված N 1
«14» Կոտրի 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/33 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Միավոր գների հանրագումար | ընդհանուր առավելագույն գինը* | մատուցման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 50111130/503 | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություն | 1. Կատարողը պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝<br>1.1 սպասարկման տարածքում ավտոպահեստամասերի պահեստի կամ խանութի առկայություն:<br>2. Պատվիրատուի ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց հետո Կատարողը պետք է ապահովի ավտոմեքենայի արտահերթ սպասարկում՝ ժամանելու պահից առավելագույնը 30 (երեսուն) րոպե հետո, որից անմիջապես հետո Կատարողը մեկ ժամվա ընթացքում պետք է ապահովի ավտոմեքենայի ախտորոշումը՝ տրամադրելով ավտոմեքենայի վրա իրականացվելիք աշխատանքների, երաշխիքների, դրանց կատարման ժամկետների մասին տեղեկանք (տեղեկանքում ներառվող ծառայությունները պետք է համապատասխանեն Հավելվածով 1.1-ով սահմանված գնացուցակին), ընդ որում՝ աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված | դրամ | 11,635,000.00 | 7,000,000.00 | Կատարողի կողմից տրամադրած հասցե՝ Մեծամոր քաղաքում | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո (բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում)ըստ պատվիրատուի պահանջի ՝ մինչև 30.12.2026թ ներառյալ ընկած ժամ անակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2026 թ չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 2 օրից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը Պատվիրատուին տրամադրում է տեղեկանք-հիմնավորում ծառայությունների մատուցումը 2 (երկու) օր անհնարին լինելու վերաբերյալ, որի մասով Պատվիրատուի կողմից սահմանվում է ծառայությունների մատուցման խելամիտ ժամկետ:<br>3. Ավտոմեքենան տեխնիկական կայան ժամանելուց՝ առավելագույնը 1 (մեկ) ժամ 30 (երեսուն) րոպե հետո, պետք է սկսվի ավտոմեքենայի սպասարկման գործընթացը (ծառայությունների մատուցումը):<br>4. Կատարողը պետք է կարողանա միաժամանակ սպասարկել մի քանի ավտոմեքենա:<br>5. Կատարողի կողմից սպասարկումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում:<br>6. Կատարողը պետք է ունենա առնվազն մի քանի ավտոմեքենայի համար նախատեսված կայանման (պահպանման) վայր, ընդ որում ավտոմեքենաների այնտեղ գտնվելու ամբողջ ընթացքում՝ Կատարողի կողմից պետք է իրականացվի շուրջօրյա (24 ժամ) տեսահսկում և այդ ընթացքում իրականացված տեսաձայնագրությունը պետք է պահպանվի առնվազն 30 (երեսուն) օր և պահանջի դեպքում 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվի Պատվիրատուին:<br>7. Փոխարինված ավտոմասերը պահանջի դեպքում՝ մեկօրյա | | | | | պարտավորության |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ժամկետում, պետք է վերադարձվեն Պատվիրատուի ներկայացուցչին:<br>8. Նորոգման ծառայությունները պետք է իրականացվեն կից ներկայացված ցանկին համապատասխան:<br>9. Կատարողը պետք է տրամադրի համապատասխան երաշխիքային ժամկետներ, որոնց մասով նվազագույն պահանջները բերված են ստորև (այն տողերի մասով, որոնց համար երաշխիքային ժամկետ հնարավոր չէ սահմանել՝ պետք է ներկայացվի համապատասխան տեղեկանք-հիմնավորում):<br>Երաշխիքներ՝ կատարված աշխատանքների համար 6 ամիս, պահեստամասերի համար 6 ամիս, եթե չի խախտվել ավտոմոբիլի շահագործման կանոնները:<br>10. Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն Մեծամորի համայնքապետարանից առավելագույնը 7 կմ հեռավորության վրա: Անհրաժեշտության դեպքում ավտոմեքենայի նորոգումը պատվիրատուի պահանջով պետք է իրականացվի պատվիրատուի նշված վայրում:<br>11. Ծառայության մատուցման համար անհրաժեշտ բոլոր միջոցները, այդ թվում պահեստամասերը, դետալները, գործիքները, սարքերը և այլ անհրաժեշտ նյութերը, պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Կամազ, Էքսկավատոր, Գրեյդեր ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցում՝ | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | համաձայն Հավելված 1.1-ում նշված ցանկի: | | | | | |

*Նշված է պայմանագրի կատարման համար առավելագույն գինը, սակայն ծառայությունները մատուցվելու են ըստ Պատվիրատուի պահանջի՝ Հավելված 1.1-ով ներկայացված գնացուցակով և դրանց դիմաց վճարումները կատարվելու է փաստացի մատուցված ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրությունների և ակտերի հիման վրա՝ Հավելված 1.1-ով սահմանված գնացուցակի համաձայն, կիրառելով ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ բանաձևը, որտեղ՝ ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է, ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է, ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է, Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է, Ք-ն մատուցված ծառայության քանակն է, իսկ մինչև 30.12.2026 թվականը պահանջի բացակայության դեպքում՝ չկատարված գումարի չափով, պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332239467
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝ ____________ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Ա/Ձ «Աշոտ Անտոնյան»
Արմավիրի մարզ ք. Մեծամոր 1 թղմ. 32-48..
amjhak35@gmail.com
«ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1930071344170100
ՀՎՀՀ 49631711

Տնօրեն՝ ____________ Ա. Անտոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«14» մարտի 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/33 ծածկագրով պայմանագրի

## ԳՆԱՑՈՒՅԱԿ
## (միավոր առավելագույն գների)

| NN | Մատուցվող ծառայությունների և ծառայության ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Կամազ | Էքսկավատոր | Գրեյդեր |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Կցորդիչի հանման և տեղադրման ծառայություն | 70000 | | |
| 2. | Կցորդում, պնևմոհիդրոուժեղարար | 68000 | | |
| 3. | Առջևի կամրջակի հանում և տեղադրում | 59000 | | |
| 4. | Առջևի կամրջակի քանդման և արատավորման ծառայություն | 35000 | | |
| 5. | Առջևի կամրջակի հավաքում | 25000 | | |
| 6. | Առջևի կամրջակի պտույտի բռունցքի գնդաձև հենարանի միջադիր | 1000 | | |
| 7. | Հետևի կամրջակի հանում և տեղադրում | 60800 | | |
| 8. | Հետևի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ քարտերի կափարիչ | 15000 | | |
| 9. | Հետևի կամրջակ, արգելակային համակարգ արգելակայի սկավառակ | 19500 | | |
| 10. | Հետևի կամրջակ, արգելակային համակարգ արգելակային կոճղակ | 19500 | | |
| 11. | Հետևի կամրջակ, արգելակային համակարգ գլխավոր փոխանցման լիսեռի առանցքակալ | 30000 | | |
| 12. | Առջևի կամրջակի անվակունդ | 135000 | | |
| 13. | Առջևի կամրջակի վերջնային փոխանցման լիսեռ | 35500 | | |
| 14. | Հիդրավլիկ համակարգ, բարձր ճնշման ռետինե խողովակ | 86800 | | |
| 15. | Հիդրավլիկ բաժանարարի խցուկ | 10000 | | |
| 16. | Հիդրավլիկ բաժանարարի փականի/золотник/ խցուկ | 10000 | | |
| 17. | Հիդրոգլանի խցուկների հավաքածու | 79000 | | |
| 18. | Հիդրավլիկ համակարգ, բարձր ճնշման խողովակ | 100600 | | |
| 19. | Հիդրավլիկ համակարգ, զսպանակ | 15000 | | |
| 20. | Հիդրավլիկ համակարգ,մխոցամատ | 30000 | | |
| 21. | Շարժիչ,ներածման փական | 20000 | | |
| 22. | Շարժիչ,արտածման փական | 20000 | | |
| 23. | Շարժիչ, փոկանիվ | 20000 | | |
| 24. | Շարժիչ, ջրի պոմպ | 20000 | | |
| 25. | Շարժիչ, տափօղակ | 5000 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 26. | Շարժիչ, յուղի մղիչ | 121000 | | |
| 27. | Շարժիչ,յուղի սրսկիչ | 35000 | | |
| 28. | ԲՃՎՄ-ի հիմնական նորոգում | | 200000 | |
| 29. | Բոցամուղի ստենդային ստուգում և կարգավորում | | 30000 | |
| 30. | Բոցամուղի փոխարինում | | 13000 | |
| 31. | Բոցամուղի փոշարարի փոխարինում | | 20000 | |
| 32. | ԲՃՎՄ-ի կցորդիչի փոխարինում /հանված ԲՃՎՄ/ | | 8000 | |
| 33. | Օդի ընդունման խողովակի թասակի փոխարինում | | 1500 | |
| 34. | Օդի ընդունման խողովակի փոխարինում | | 1500 | |
| 35. | Օդատար խողովակի փոխարինում | | 1500 | |
| 36. | Կիպարար խցուկի փոխարինում | | 1000 | |
| 37. | Օդի զտիչի էլեմենտի փոխարինում | | 3000 | |
| 38. | Խլացուցիչի վերանորոգում | | 25000 | |
| 39. | Ռադիատորի վերանորոգման ծառայություն | | 25000 | |
| 40. | Ռադիատորի կախոցի բարձիկի փոխարինում | | 1500 | |
| 41. | Ռադիատորի կախոցի շրջանակի հանում և տեղադրում | | 11000 | |
| 42. | Շարժիչի ջրի պոմպի փոխարինում | | 25000 | |
| 43. | Գեներատորի քանդում, արատավորում, սպասարկում և հավաքում | | 20000 | |
| 44. | Մեկնարկիչի հանում և տեղադրում | | 13000 | |
| 45. | Մեկնարկիչի Նորոգում | | 80000 | |
| 46. | Անվակունդի ռեդուկտորի քանդում,հավաքում,վերանորոգում | | 60000 | |
| 47. | Դիմացի կամրջակի քանդում և արատավորում | | 70000 | |
| 48. | Դիմացի բարձիչի ապամոնտաժում, մոնտաժում | | 50000 | |
| 49. | Հիդրոհամակարգի ապամոնտաժում, մաքրում,զտիչների փոխարինում և տեղադրում | | 85600 | |
| 50. | Գլխավոր հիդրոնասոսի վերանորոգում, ապամոնտաժում, տեղադրում | | 464000 | |
| 51. | Հիդրոբաշխիչի վերանորոգում,ապամոնտաժում,արատավորում, մաքրում, հավաքում | | 376000 | |
| 52. | կովշի ատամ ուղիղ | | 45000 | |
| 53. | խողովակ գեներատորի | | 45000 | |
| 54. | միացման սարք | | 45000 | |
| 55. | հիդրավլիկի ճկախողովակ | | 45000 | |
| 56. | ճկուն խողովակ | | 45000 | |
| 57. | կովշի ատամ ձախ | | 45000 | |
| 58. | կովշի ատամ աջ | | 45000 | |
| 59. | ճկախողովակ հիդրոնասոսի կարճ | | 47000 | |
| 60. | հավաքովի ճկախողովակ | | 47000 | |
| 61. | բարձիկ փոխանցման տուփի | | 47000 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 62. | Ճկախողովակ հետևի բարձիչի կարճ | | 50000 | |
| 63. | Ճկախողովակ դիմացի բարձիչի կարճ | | 50000 | |
| 64. | Առանցքակալ դիմացի | | 50000 | |
| 65. | անջատիչ մեկնարկիչ | | 55000 | |
| 66. | անջատիչ հիդրոնասոսի | | 55000 | |
| 67. | շարժիչի տվիչ | | 55000 | |
| 68. | կափույր | | 55000 | |
| 69. | խցուկ դիմացի | | 55000 | |
| 70. | հավաքովի ճկախողովակ մետաղական գարվանականներով | | 55000 | |
| | | | | |
| 71. | թերմոստատ | | 55000 | |
| 72. | տափօղակ | | 55000 | |
| 73. | Ճկախողովակ հետևի բարձիչի երկար | | 55000 | |
| 74. | շարժիչի վերին գլխիկի կափարիչ | | 55000 | |
| 75. | ճկուն խողովակ | | 55000 | |
| 76. | դիզելային կոշտ ֆիլտր | | 55000 | |
| 77. | ճկախողովակ դիմացի բարձիչի երկար | | 55000 | |
| 78. | ռելե գեներատորի | | 55000 | |
| 79. | հավաքովի խողովակ հետևի բարձիչի  բարձր ճնշման | | 55000 | |
| 80. | դիմացի լուսարձակ | | 55000 | |
| 81. | վռան շարժիչի | | 55000 | |
| 82. | Կոնանական Առանցքակալ | | 60000 | |
| 83. | առանցքակալի հավաքածու | | 55000 | |
| 84. | միջադիր | | 55000 | |
| 85. | խցուկների հավաքածու | | 53000 | |
| 86. | խցուկ դիմացի | | 53000 | |
| 87. | Խցուկ հետևի | | 53000 | |
| 88. | հավաքովի խողովակ ռետինե մետաղական գլխիկներով դիմացի բարձիչի | | 53000 | |
| 89. | օղակ դիմացի ևհետևի բարձիչների | | 53000 | |
| 90. | գեներատորի փոկ | | 53000 | |
| 91. | սենսոր | | 53000 | |
| 92. | բարձիկ շարժիչի | | 53000 | |
| 93. | խողովակ մետաղական | | 53000 | |
| 94. | Փոկ շարժիչի | | 53000 | |
| 95. | առանցքակալ | | 59000 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 96. | միացման սարք | | 85000 | |
| 97. | մխոցաօղերի հավաքածու | | 90000 | |
| 98. | խողովակ հիդրոստատի մետաղական | | 95000 | |
| 99. | խցուկների հավաքածու առջևի | | 95000 | |
| 100. | գեներատորի փոկանիվ | | 95000 | |
| 101. | լիցքավորման գեներատոր | | 390000 | |
| 102. | տուրբոմղիչ | | 1315000 | |
| 103. | պոմպ | | 1751000 | |
| 104. | Շարժիչի յուղի պոմպի վերանորոգում | | | 15000 |
| 105. | Վառելիքի բաքի հանում և մաքրում, տեղադրում | | | 25000 |
| 106. | ԲՃՎՄ-ի հանում և տեղադրում | | | 10000 |
| 107. | ԲՃՎՄ-ի ստենդային ստուգում, կարգավորում | | | 25000 |
| 108. | ԲՃՎՄ-ի քանդում, հանգույցների, դետալների մաքրում, լվացում և սեխմված օդով փչում և հավաքում | | | 10000 |
| 109. | ԲՃՎՄ-ի ընթացիկ նորոգում | | | 20000 |
| 110. | ԲՃՎՄ-ի հիմնական նորոգում | | | 31000 |
| 111. | Ռադիատորի վերանորոգման ծառայություն | | | 21000 |
| 112. | Ռադիատորի կախոցի շրջանակի հանում և տեղադրում | | | 10000 |
| 113. | Ռադիատորի կախոցի շրջանակի վերանորոգում | | | 8500 |
| 114. | Շարժիչի ջրի պոմպի փոխարինում | | | 6000 |
| 115. | Օդափոխիչի թևանիվի փոխարինում | | | 4500 |
| 116. | Գեներատորի քանդում, արատավորում, սպասարկում և հավաքում | | | 6000 |
| 117. | Ապակու փոխարինում և կիպարարի փոխարինում | | | 8000 |
| 118. | Յուղման պտուկի փոխարինում | | | 1000 |
| 119. | Հիդրոնասոսի ապամոնտաժում,վերանորոգում, տեղադրում | | | 15000 |
| 120. | Հիդրոբաշխիչի քանդում, վերանորոգում, դետալների մաքրում | | | 29000 |
| 121. | Փխրեցուցիչի ապամոնտաժում, մոնտաժում | | | 20000 |
| 122. | Շրջադարձային օղակի քանդում,վերանորոգում | | | 45000 |
| 123. | Պտտվող հարթաշերեփի ռեդուկտորի ապամոնտաժում, մոնտաժում,վերանորոգում | | | 35000 |
| 124. | Պտտվող հարթաշերեփի ռեդուկտորի վերանորոգում | | | 13000 |
| 125. | Դիմացի կամրջակի ռեդուկտորի վերանորոգում | | | 8500 |
| 126. | Դիմացի կամրջակի ռեդուկտորի հավաքում | | | 15000 |
| 127. | Միջին կամրջակի ապամոնտաժում,մոնտաժում,վերանորոգում | | | 95000 |
| 128. | Հետևի կամրջակի ապամոնտաժում, վերանորոգում | | | 30000 |
| 129. | Հետևի կամրջակի քանդում և արատավորում,հավաքում | | | 25000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 130. | Հետևի կամրջակի ռեդուկտորի քանդում և արատավորում,վերանորոգում | | | 10000 |
| 131. | Հետևի կամրջակի ռեդուկտորի հավաքում | | | 10000 |
| 132. | Ամրաշրջանակի վերանորոգում | | | 10000 |
| 133. | Ընթացքային մասի փորձարկումներ | | | 93000 |
| 134. | Միջադիր | | | 1400 |
| 135. | Խողովակ ռետինե | | | 3500 |
| 136. | Անուր | | | 1400 |
| 137. | Ճկափողակ | | | 2500 |
| 138. | Հիդրոպոմպի շարժաբեր | | | 6800 |
| 139. | Ատամնանիվ | | | 8000 |
| 140. | Պոմպի իրան | | | 21000 |
| 141. | Միջադիր | | | 1700 |
| 142. | Սեվեռապնդման օղակ | | | 1400 |
| 143. | Գնդիկավոր առանցքակալ | | | 5000 |
| 144. | Օղակ | | | 1200 |
| 145. | Ատամնանիվավոր պոմպ | | | 70000 |
| 146. | Շարժիչի յուղի պոմպ | | | 74000 |
| 147. | Շարժիչի յուղի պոմպի ատամնանիվ | | | 15000 |
| 148. | Շարժիչի յուղի պոմպի յուղընդունիչ | | | 15000 |
| 149. | Շարժիչի յուղի պոմպի իրան | | | 19000 |
| 150. | Շարժիչի յուղի պոմպի կափարիչ | | | 5000 |
| 151. | Կցորդիչի միջադիր | | | 1700 |
| 152. | Խողովակ | | | 2000 |
| 153. | Կցորդիչի միջադիր | | | 1500 |
| 154. | Շարժիչի յուղի պոմպի լիսեռիկ | | | 9800 |
| 155. | Պահեստամաս Ռադիատորի բլոկ | | | 450000 |
| 156. | Պահեստամաս Հզորության բլոկ | | | 45000 |
| 157. | Պահեստամաս Կարդանային փոխանցման տուփ | | | 2000 |
| 158. | Պահեստամաս Կարդանային լիսեռներ | | | 120000 |
| 159. | Պահեստամաս Միացնող ձողերի կրողներ | | | 25000 |
| 160. | Պահեստամաս Գլխավոր լիսեռի կրողը | | | 25000 |
| 161. | Պահեստամաս Շարժիչի խողովակ | | | 13000 |
| 162. | Պահեստամաս Ռադիատորի բլոկ | | | 13000 |
| 163. | Պահեստամաս Դիֆուզոր | | | 20000 |
| 164. | Պահեստամաս մատակարարում կայանի համար | | | 15000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 165. | Պահեստամաս շարժիչային ծածկ | | | 74000 |
| 166. | Պնևմոկարգավորիչի փողակ | | | 3000 |
| 167. | Բոցամուղի պահունակ | | | 1700 |
| 168. | Կալունակ | | | 2600 |
| 169. | Փողակ | | | 2000 |
| 170. | Վառելիքի պոմպ | | | 300000 |
| 171. | Վառելիքի պոմպի իրան | | | 100000 |
| 172. | Ռադյատոր | | | 250000 |
| 173. | Շարժիչի ջրի պոմպի իրան | | | 30000 |
| 174. | Գեներատոր հավաքված | | | 95000 |
| 175. | Ստատոր հավաքված | | | 30000 |
| 176. | Ռոտոր հավաքված | | | 25000 |
| 177. | Մեկնարկիչ նոր | | | 95000 |
| 178. | Մեկնարկիչի ռելե | | | 5000 |
| 179. | Մեկնարկիչի խարիսխ | | | 25000 |
| **Առվելագույն միավոր գների գումար** | | 1,145,700 | 7,801,600 | 2,687,700 |
| | | | | |
| **Ընդամենը՝ առվելագույն միավոր գների հանրագումար** | | | | 11,635,000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332239467
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար ---------- Է. Հովհաննիսյան
(ստորագրությոն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Ա/Ձ «Աշոտ Անտոնյան»
Արմավիրի մարզ ք. Մեծամոր 1 թղմ. 32-48..
amjhak35@gmail.com
«ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1930071344170100
ՀՎՀՀ 49631711

Տնօրեն ---------- Ա. Անտոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 2*
*«14» Մայիսի 2026թ. կնքված*
*ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/33 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Անվանումը | Չ/մ | Ընդհանուր քանակը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ.՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | Ընդհանուր առավելագույն գինը |
| 1 | 50111130/503 | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություն | դրամ | 1 | - | - | - | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 |

*Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են Մեծամորի համայնքապետարանի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա: Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Պատվիրատուն վճարումը կատարում է իր պահանջով՝ էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով ներկայացված ծառայությունների մատուցման պահանջ-հայտերի հիման վրա փաստացի մատուցված ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, **սակայն 31.12.2026 թվականի դրությամբ պահանջ-հայտերի բացակայության դեպքում չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332239467
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝ ______ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Ա/Ձ «Աշոտ Անտոնյան»
Արմավիրի մարզ ք. Մեծամոր 1 թաղ. 32-48..
amjhak35@gmail.com
«ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 193007344170100
ՀՎՀՀ 49631711

Տնօրեն ______ Ա. Անտոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«____» _______________ 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/33 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_______________________

_______________________

գտնվելու վայրը ___________

հհ _______________

հվհհ _______________

Պատվիրատու

_______________________

_______________________

գտնվելու վայրը ___________

հհ_______________

հվհհ_______________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ___________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_______________________
ստորագրություն

_______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_______________________
ստորագրություն

_______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1

« __ » ____________ 2026թ. կնքված

ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/33 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________ -ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի

համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
| --- | --- | --- |
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________
ազգանուն, անուն

________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________
ազգանուն, անուն

________________
ստորագրություն